# Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր
## ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 15-Ի ԹԻՎ 1-Ա, 2-Ն, 3-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 2-Ն որոշման նախաբանում «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի անվանումը թերի է գրառված: Բացի այդ, հղումը պետք է կատարվեր նույն օրենքի 35-րդ հոդվածի ոչ թե 6-րդ և 7-րդ կետերին, այլ՝ մասերին:

Որոշման բովանդակության մեջ «համաձայն» բառից հետո և որոշմամբ հաստատված հավելվածի վերևի աջ անկյունում նշված «1» թիվը հանել: Բացի այդ, որոշման և որոշմամբ հաստատված հավելվածի հերթական համարները տարբեր են գրառված:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 7-րդ մասի՝ մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հետ համայնքի ղեկավարը համայնքի ավագանուն է ներկայացնում հաշվետու տարում հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվություն, որը ենթակա է հրապարակման՝ օրենքով սահմանված կարգով: Սակայն համայնքի ավագանու հաստատմանը ներկայացվել է միայն համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը:

Անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով մինչև ս/թ մարտի 1-ը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնել նաև համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ 2019 թվականի հաշվետվությունը:

Թիվ 3-Ն որոշման դրույթները սխալ են համարակալված:

*Կատարող՝ Ն.Մարտիրոսյան*
*17.02.2020թ.*